ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

# Ստուգաթերթ N 5

## Սպորտային օբյեկտների գործունեություն
## Լողավազան

## (ՏԳՏԴ ծածկագիր՝ 93.11.0)

_____ _____ _____
(տեսչության տարածքային մարմնի անվանումը) (հասցեն) (հեռախոսահամարը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ ավարտը՝ _____

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը) (ՀՎՀՀ-ն)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

_____ _____
(տնտեսվարող սքուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____

| N | **Հարց** | **այո** | **ոչ** | **չ/պ** | **կշիռ** | **հղում** | **Ստուգման մեթոդ** | **Մեկնաբանություն** |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ապահովվում է ավազանի թույլատրելի միանվագ ծանրաբեռնվածությունը ըստ 1 մարդուն անհրաժեշտ ջրի հայելու նորմատիվ մակերեսի: **նշում 1** | | | | 2 | Հղում 1, կետ 2.1 | Փաստաթղթային, գործիքաչափում, հաշվարկ | |
| 2. | Ապահովվում է լողացողների շարժման ուղղությունը. նախասրահ, վերնահագուստի հանդերձարան, զգեստարան, ցնցուղարան, ավազան ուղղությամբ: | | | | 2 | Հղում 1, կետ 2.2 | տեսողական | |
| 3. | Նախասրահի, վերնահագուստի հանդերձարանի և զգեստարանի մակերեսները համապատասխանում են նորմատիվ պահանջներին: **նշում** 2 | | | | **1** | Հղում 1, կետ 2.3 | փաստաթղթային | |
| 4. | Ցնցուղարանները տեղակայված են զգեստարանից դեպի ավազան տանող ուղու անցումային մասում: | | | | **2** | Հղում 1, կետ 2.4 | տեսողական | |
| 5. | Ցնցուղարաններում ապահովվում է 3 հոգու համար՝ 1 ցնցուղով: | | | | **1** | հղում, կետ 2.4 | փաստաթղթային, հաշվարկ | |
| 6. | Եթե առկա է անմիջական մուտք ցնցուղարանից դեպի ավազան, ապա նախքան ավազանը տեղակայված է հոսող, վարակազերծված ջրով ոտքերի լվացման ավազան: | | | | **2** | Հղում 1, կետ 2.5 | տեսողական | |
| 7. | Զգեստարաններին կից կան սանհանգույցներ, որոնցում տեղադրված սարքավորումների քանակը համապատասխանում է նորմատիվ պահանջներին: **նշում 3** | | | | **1** | Հղում 1, կետ 2.6 | փաստաթղթային, հաշվարկ | |
| 8. | Ավազանի ջրի վերին աղտոտված շերտի հեռացման համար ավազանի պատերին նախատեսված են ջրահեռացման ջրհորդաններ: Ավազանը լցվում է մինչև արտահոսքի ջրհորդանի եզրը:<br>Ավազանը ապահովված է ջրափոխանակության համակարգով (հետշրջանառության, հոսքային, ջրի պարբերաբար փոխումով): Ավազանի ջուրը թարմացվում է ջրափոխանակության միջոցով: | | | | **2** | Հղում 1, կետ 2.7, 2.10, 5.2 | տեսողական | |
| 9. | Սենքերի և ավազանի պատերի, հատակի կառուցվածքային և երեսպատման նյութերը չքայքայվող, ջրադիմացկուն են, մակերեսները հարթ, հեշտությամբ լվացվող և ախտահանվող են: | | | | **3** | Հղում 1, կետ 2.8 | տեսողական | |
| 10. | Սենքերի և ավազանի պատերի, հատակի ախտահանման համար օգտագործում են. | | | | | Հղում 1, կետ 2.8 | | |
| 10.1 | ախտահանիչ նյութեր, ռեագենտներ | | | | **3** | | Փաստաթղթային, տեսողական | |
| 10.2 | ախտահանիչ նյութերը, ռեագենտները ՀՀ սահմանված կարգով գրանցված և թույլատրված են: **նշում 4** | | | | **3** | | փաստաթղթային | |
| 10.3 | ախտահանիչ լուծույթների պահանջվող տոկոսայնությունը խախտված չէ: | | | | **3** | | լաբորատոր հետազոտություն | |
| 11. | Ավազանի ջրի ախտահանման համար օգտագործվող ախտահանիչ նյութերը ՀՀ-ում սահմանված կարգով գրանցված | | | | **3** | Հղում 1, կետ 2.8 | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | և թույլատրված են: **նշում 5** | | | | | | | |
| 12. | Սպորտային լողավազանների սենքերի ցանկում առկա է բժշկի աշխատասենյակ: | | | | **1** | Հղում 1, կետ 2.9 | տեսողական | |
| 13. | Սպորտային և առողջարարական լողավազանների սենքերի ցանկում առկա է լաբորատորիայի սենքեր՝ մանրէաբանական և սանիտարաքիմիական հետազոտությունների համար կամ հետազոտությունները կատարվում են պայմանագրային կարգով՝ համապատասխան հետազոտություններ կատարելու իրավունք ունեցող այլ կազմակերպությունների լաբորատորիաների կողմից: | | | | **3** | Հղում 1, կետ 2.9 | Փաստաթղթային, տեսողական | |
| 14. | Ունեն՝ | | | | | Հղում 1, կետ .11 | Տեսողական, փաստաթղթային | |
| 14.1 | ավազանի ջրի մաքրման սարքեր: | | | | **3** | | | |
| 14.2 | ավազանի ջրի վարակազերծման սարքեր: | | | | **3** | | | |
| 14.3 | ավազանի ջրի բաշխման սարքեր: | | | | **2** | | | |
| 14.4 | Եթե ունեն օզոնատորային սարքավորում, ապա այն ունի դեգազատոր (օզոնաօդային խառնուրդից օզոնի հեռացման համար), ինչպես նաև խառնման խուց՝ ջրի և օզոնի կոնտակտի համար: | | | | **3** | Հղում 1, կետ 2.12 | տեսողական | |
| 15. | Ջրի մաքրման, վարակազերծման, բաշխման սարքերը տեղակայված են հիմնական կամ առանձին շինությունում: | | | | **2** | Հղում 1, կետ 2.11 | տեսողական | |
| 16. | Ախտահանիչ և կոագուլացնող նյութերի, լուծույթների պատրաստման և պահպանման սենքերի վերևում տեղակայված չէ սանհանգույցներ և ցնցուղարաններ: | | | | **2** | Հղում 1, կետ 2.13 | տեսողական | |
| 17. | Ավազանի դահլիճի, քլորացման և օզոնացման սենքերի համար նախատեսված է ինքնուրույն ներհոս և արտաձիգ օդափոխիչ համակարգեր: | | | | **3** | Հղում 1, կետ 3.1 | տեսողական | |
| 18. | Քլորացման և օզոնացման սենքերի կառավարման վահանակը տեղակայված է նշված սենքերից դուրս: | | | | **2** | Հղում 1, կետ 3.1 | տեսողական | |
| 19. | Ապահովվում է միկրոկլիմայի /օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, 1 ժամում օդափոխանակության չափանիշների, օդի շարժման արագության/ նորմերը՝ **նշում 6** | | | | | Հղում 1, կետ 3.2., Հավելված 1.4 | գործիքաչափում | |
| 19.1 | լողավազանի ավազանի դահլիճում, | | | | **2** | | | |
| 19.2. | պարապմունքների նախապատրաստական դահլիճում, | | | | **1** | | | |
| 19.3 | զգեստարաններում, | | | | **1** | | | |
| 19.4 | ցնցուղարաններում, | | | | **1** | | | |
| 19.5 | մերսման սենքերում, | | | | **1** | | | |
| 19.6 | սաունայի խցիկում, | | | | **2** | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20. | Ապահովվում է լողավազանի դահլիճի նորմատիվ լուսավորությունը: **նշում 7** | | | | **2** | Հղում 1, կետ3.3 | գործիքաչափում | |
| 21. | Պահպանվում է լողավազանի ավազանում ջրի նորմատիվ ջերմաստիճանը. **նշում 8** | | | | **3** | Հղում 1, կետ 3.2. Հավելված 1.4 | Տեղում կատարված գործիքաչափում | |
| 22. | Օդափոխության սարքավորումները տեղադրված են աղմուկը և ցնցումը նվազեցնող սարքավորումներով ապահովված օդափոխիչ խցիկներում: | | | | **1** | Հղում 1, կետ 3.5 | տեսողական | |
| 23. | Ջրամատակարարման համակարգից, ջրի պահուստային տարողություններից ծորակներին և ավազանին մատակարարվող խմելու ջրի որակը համապատասխանում է նորմերին: **նշում 9** Որոշիչ | | | | **3** | Հղում 1, կետ 4.2, Հղում 2 | լաբորատոր | |
| 24. | Շահագործման ընթացքում ավազանի ջրի որակը համապատասխանում է նորմերին: **նշում 10** Որոշիչ | | | | **3** | Հղում 1, կետ 4.4, Հավելված 1.5 | լաբորատոր | |
| 25. | Ավազանի ջուրը պարտադիր վարակազերծվում է: Որոշիչ | | | | **3** | Հղում 1, կետ 5.3 | տեսողական | |
| 26. | Վարակազերծման այլընտրանքային մեթոդների օգտագործման դեպքում, դրանց հուսալիությունը և անվտանգությունը հիմնավորվել է տեխնոլոգիական և հիգիենիկ հետազոտություններով: **նշում 11** | | | | **3** | Հղում 1, կետ 5.3 | փաստաթղթային | |
| 27. | Ջրի վարակազերծող ռեագենտը տրվում է հոսքային համակարգի դեպքում՝ ջուր մատակարարող խողովակի մեջ, հետշրջանառության դեպքում՝ նախքան ֆիլտրերը, օզոնով և ՈՒՄ-ճառագայթման դեպքում՝ ֆիլտրերից հետո: | | | | **2** | Հղում 1, կետ 5.3 | տեսողական | |
| 28. | Ջրին տրվող վարակազերծող ռեագենտի աշխատանքային չափաքանակը որոշվում է փորձնական ճանապարհով՝ դրա կոնցենտրացիայի ապահովման հաշվարկի հիման վրա: | | | | **2** | Հղում 1, կետ 5.3 | Փաստաթղթային՝ Քլորապահանջի հաշվարկ | |
| 29. | Սենքերի ամենօրյա մաքրումը և ախտահանումը. | | | | | Հղում 1, կետ 5.6 Հղում 4, կետեր՝ 31, 32, 34, 35 | Տեսողական հարցում | |
| 29.1 | Իրականացվում է աշխատանքային օրվա ընթացքում և վերջում: | | | | **2** | | | |
| 29.2 | Պարտադիր ախտահանվում են սանհանգույցները, ցնցուղարանը, զգեստարանը, հանդերձարանը, ավազանի սենքերը, շրջանցման ուղիները, նստարանները, դռների բռնակները: | | | | **2** | | | |
| 30. | Սանիտարական սարքավորումների, լվացարանների, հատակի, պատերի մաքրումը և ախտահանումը, սանհանգույցների մաքրման պարագաների ախտահանումը կատարվում է սահմանված կարգով: **նշում 12** | | | | **3** | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31. | Ախտահանման ենթակա մակերեսներից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել: | | | | 3 | Հղում 1, կետ 5.6 | լաբորատոր | |
| 32. | Ավազանի ջուրը դատարկելուց հետո և մեխանիկական մաքրումից հետո ավազանի ախտահանումը և ախտահանիչ լուծույթի ողողումը և հեռացումը կատարվում է սահմանված կարգով: **նշում 13** | | | | 2 | Հղում 1, կետ 5.6 | Տեսողական հարցում | |
| 33. | Լողորդների շնչառական գոտու օդում պարունակվող ազատ քլորի կոնցենտրացիան չի գերազանցում նորմը՝ 0,1 մգ/մ$^3$, օզոնացման դեպքում՝ օզոնի կոնցենտրացիան՝ 0,16 մգ/մ$^3$: | | | | 3 | Հղում 1, կետ 5.7 | գործիքաչափում | |
| 34. | Ավազանի (հատկապես բաց լողավազանի / պատերի մամռապատման, ծաղկման դեմ պայքարելու և մաքրումը հեշտացնելու համար ավազանի ջրին պարբերաբար ավելացնում են պղնձարջասպի (պղնձի սուլֆատի) լուծույթ՝ 1,0-5,0 մգ/լ կոնցենտրացիայով կամ այլ թույլատրված ռեագենտներ /ախտահանիչ նյութեր/: | | | | 2 | Հղում 1, կետ 5.8 | Տեսողական հարցում | |
| 35. | Լողավազանի աշխատակազմը (մարզիչներ, լողի հրահանգիչներ, լողավազանի սպասարկման ոլորտի աշխատողներ՝ պրոցեդուրաներ իրականացնող, մերսողներ) ունեն պահանջվող ձևին համապատասխանող, առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության գրքույկ: | | | | 2 | Հղում 3, Հավելված 2, կետ 17 | Փաստաթղթային | |
| 36. | Պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների ծավալները | | | | 3 | Հղում 3, Հավելված 2, կետ 17 | Փաստաթղթային | |
| 37. | Պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների պարբերականությունը: **նշում 14** | | | | 3 | Հղում 3, Հավելված 2, կետ 17 | Փաստաթղթային | |
| 38. | Չեն թույլատրվում լողավազանի ցնցուղարան, ավազանի դահլիճ մտնել հագուստով, կոշիկներով, իսկ ավազան՝ առանց ցնցուղ ընդունելու: | | | | 3 | Հղում 1, կետ 5.11 | տեսողական | |
| 39. | Եթե հաճախորդներին տրվում են հողաթափեր, ապա դրանք: միայն միանվագ օգտագործման են: | | | | 2 | Հղում 1, կետ 5.12 | տեսողական | |
| 40. | Հաճախորդներին տրվում են միայն անհատական օգտագործման, օճառ, սպունգ և փաթեթավորված սպիտակեղեն: | | | | 2 | Հղում 1, կետ 5.12 | տեսողական | |
| 41. | Տրվող սրբիչները, սպիտակեղենը լվացվում են կենտրոնացված լվացքատանը կամ պայմանագրային կարգով: | | | | 3 | Հղում 1, կետ 5.12 | Տեսողական, փաստաթղթային | |
| 42. | Հանդերձարանները ապահովված են հագուստի անհատական պահարաններով, | | | | 2 | Հղում 1, կետ 5.13 | Տեսողական, հաշվարկ | |
| 43. | Հագուստի անհատական պահարանների թիվը | | | | 2 | Հղում 1, կետ | Տեսողական, | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխանում է մեկ հերթափոխում թույլատրված հաճախորդների քանակությանը: | | | | | 5.13 | հաշվարկ | |
| 44. | Ունեն լաբորատոր-գործիքային արտադրական հսկողության ծրագիր: | | | | 3 | Հղում 1, կետ 6.1 | Փաստաթղթային | |
| 45. | Լաբորատոր-գործիքային արտադրական հսկողության ծրագիրը ընդգրկում է անհրաժեշտ լաբորատոր-գործիքային հետազոտությունները՝ | | | | | Հղում 1, կետ 6.1 | Փաստաթղթային | |
| 45.1 | միկրոկլիմայի չափորոշիչների, | | | | 1 | | | |
| 45.2 | օդափոխության էֆեկտիվության, | | | | 1 | | | |
| 45.3 | ավազանի շնչառական գոտու օդի բաղադրության, | | | | 1 | | | |
| 45.4 | լուսավորության, | | | | 1 | | | |
| 45.5 | խմելու ջրի որակի, | | | | 2 | | | |
| 45.6 | ավազանի ջրի որակի, | | | | 2 | | | |
| 45.7 | ընթացիկ ախտահանման որակի հսկողության համար: | | | | 2 | | | |
| 46. | Շահագործման ընթացքում իրականացվում է արտադրական հսկողություն միկրոկլիմայի չափորոշիչների նկատմամբ՝ 4 ժամը 1 անգամ հաճախականությամբ: | | | | 2 | Հղում 1, կետ 6.6 | տեսողական, փաստաթղթային | |
| 47. | Շահագործման ընթացքում իրականացվում է արտադրական հսկողություն տարին 1 անգամ հաճախականությամբ. | | | | | Հղում 1, կետ 6.6 | փաստաթղթային | |
| 47.1 | օդափոխության էֆեկտիվության, | | | | 1 | | | |
| 47.2 | ավազանի շնչառական գոտու օդի բաղադրության, | | | | 1 | | | |
| 47.3 | լուսավորության, | | | | 1 | | | |
| 47.4 | աղմուկի մակարդակի որոշման: | | | | 1 | | | |
| 48. | Ավազանի ջրի որակի նկատմամբ արտադրական լաբորատոր հսկողությունը իրականացվում է ցուցանիշների սահմանված ծավալով և հաճախականությամբ. **նշում 15** | | | | 3 | Հղում 1, կետ 6.3 | փաստաթղթային | |
| 49. | Որոշում են ոչ պակաս, քան ամիսը 1 անգամ ավազանի ջրում քլորոֆորմի (քլորացման դեպքում), կամ ֆորմալդեհիդի (օզոնացման դեպքում) մակարդակները: | | | | 2 | Հղում 1, կետ 6.5 | փաստաթղթային | |
| 50. | Այն դեպքում, երբ քլորոֆորմի կամ ֆորմալդեհիդի միացությունների քանակը մշտապես գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, օգտագործում են ջրի վարակազերծման այլընտրանքային եղանակներ (ուլտրամանուշակագույն ճառագայթում կամ այլ): | | | | 2 | Հղում 1, կետ 6.5 | փաստաթղթային | |
| 51. | Իրականացվում է՝ **նշում 16** | | | | | Հղում 1, կետ 6.7 | փաստաթղթային | |
| 51.1 | ընթացիկ ախտահանման աշխատանքների որակի արտադրական հսկողություն | | | | 3 | | | |
| 51.2 | ընթացիկ ախտահանման աշխատանքների որակի արտադրական հսկողությունը սահմանված ծավալով և | | | | 2 | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հաճախականությամբ է: | | | | | | | |
| 52 | Արտադրական լաբորատոր հսկողության ժամանակ լվացուկների հետազոտության արդյունքում շեղումների արձանագրման դեպքում տեղյակ են պահել Պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններին: | | | | 3 | Հղում 1, կետ 6.8, 6.9 | փաստաթղթային | |
| 53 | Արտադրական լաբորատոր հսկողության ժամանակ ավազանի ջրի հետազոտության արդյունքում շեղումների արձանագրման դեպքում տեղյակ են պահել Պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններին: | | | | 3 | Հղում 1, կետ 6.8, 6.9 | փաստաթղթային | |
| 54. | Արտադրական լաբորատոր հսկողության ժամանակ ավազանի ջրի հետազոտության արդյունքում շեղումների արձանագրման դեպքում անմիջապես ձեռնարկել են միջոցառումներ /ֆիլտրերի մաքրում, վարակազերծող ռեագենտի մնացորդային քանակի ավելացում, սենքերի ու գույքի հիմնական մաքրում և ախտահանում, տրվող թարմ ջրի ծավալի ավելացում/: | | | | 3 | Հղում 1, կետ 6.8, 6.9 | փաստաթղթային | |
| 55. | Ավազանի ջրի հետազոտության արդյունքում շեղումների արձանագրման դեպքում միջոցառումների ձեռնարկումից հետո կատարել են ջրի կրկնակի մանրէաբանական (ընդգրկելով լրացուցիչ ցուցանիշներ) հետազոտություն: | | | | 3 | Հղում 1, կետ 6.10 | փաստաթղթային | |
| 56. | Կրկին շեղումների արձանագրման դեպքում. | | | | | Հղում 1, կետ 6.11, 6.13 | փաստաթղթային, հարցում | |
| 56.1 | լողավազանի շահագործումը ժամանակավորապես դադարեցրել են: | | | | 3 | | | |
| 56.2 | ավազանի ջուրը դատարկել են, | | | | 3 | | | |
| 56.3 | դատարկելուց հետո ավազանը ենթարկել են հիմնական մաքրման և ախտահանման, | | | | 3 | | | |
| 56.4 | նորից կատարել են լաբորատոր հետազոտություն, | | | | 3 | | | |
| 56.5 | շեղումների բացակայության դեպքում միայն վերսկսել են շահագործումը: | | | | 3 | | | |
| 57. | Ընթացիկ ախտահանման աշխատանքերի որակի լվացուկների հետազոտության արդյունքում շեղումների արձանագրման դեպքում կատարել են կրկնակի՝ | | | | | Հղում 1, կետ 6.10 | փաստաթղթային | |
| 57.1 | մանրէաբանական հետազոտություն: | | | | 3 | | | |
| 57.2 | մակաբուծաբանական հետազոտություն: | | | | 3 | | | |
| 58. | Ընթացիկ ախտահանման աշխատաների որակի լվացուկների հետազոտության արդյունքում կրկին շեղումների արձանագրման դեպքում. | | | | | Հղում 1, կետ 6.11 | փաստաթղթային | |
| 58.1 | լողավազանի շահագործումը ժամանակավորապես դադարեցրել են: | | | | 3 | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 58.2 | Սենքերը ենթարկել են հիմնական մաքրման և ախտահանման | | | | 3 | | | |
| 58.3 | լվացուկների հետագա հետազոտությամբ շեղումներ չարձանագրրելու դեպքում միայն վերսկսել են շահագործումը: | | | | 3 | | | |
| 59. | Ավազանի ջրում մակաբուծային հիվանդությունների հարուցիչներ հայտնաբերելու դեպքում սպասարկող անձնակազմին և մշտական հաճախորդներին հետազոտել են հելմինթների ձվիկների և աղիքային միաբջիջների ցիստերի նկատմամբ: | | | | 3 | Հղում 1, կետ 6.12 | փաստաթղթային | |
| 60. | Սանհանգույցները ապահովված են բնական օդափոխանակությամբ կամ օդի արտաձգման մղանցքներով: | | | | 2 | Հղում 4, կետ 11, 13 | տեսողական | |
| 61. | Սանհանգույցների լվացարանները ունեն արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներ կամ էլ առանց ծորակի կառավարման հարմարանքի՝ զգայական (սենսոր) կառավարմամբ: | | | | 2 | Հղում 4, կետ 12 | տեսողական | |
| 62. | Սանհանգույցները ապահովված են հեղուկ օճառով,. | | | | 3 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 63. | Սանհանգույցները ապահովված են ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ թղթյա միանվագ օգտագործման սրբիչներով: | | | | 2 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 64. | Սանհանգույցները ապահովված են զուգարանի թղթով: | | | | 3 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 65. | Սանհանգույցների խցիկներում կան աղբանոթներ: | | | | 2 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 66. | Աղբարկղները կափարիչի ոտնակային հարմարանքով են: | | | | 2 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 67. | Աղբարկղներում տեղադրված են պոլիէթիլենային տոպրակներ: | | | | 2 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 68. | Սանհանգույցների խցիկներում կան կեռիկներ՝ վերին հագուստների համար: | | | | 1 | Հղում 4, կետ 26, 36 | տեսողական | |
| 69. | Սանհանգույցների զուգարանակոնքերի և միզամանների ջրի տակառիկները և մյուս սարքավորումները շահագործվում են սարքին վիճակում՝ անսարքությունները վերացվում են անմիջապես: | | | | 3 | Հղում 4, կետ 38 | տեսողական | |
| 70. | Սանհանգույցների զուգարանակոնքերի և միզամանների ջրի տակառիկները և լվացարանները ապահովված են մշտական հոսող (առնվազն) սառը ջրով: | | | | 3 | Հղում 4, կետ 39 | տեսողական | |
| 71. | Սպասարկող անձնակազմը առանձին սենքում կամ պահարանում պահում է սանհանգույցների մաքրման գույքը՝ խոզանակներ, փալասներ, ախտահանիչ լուծույթներ, դույլեր: | | | | 1 | Հղում 4, կետ 28 | տեսողական | |

**Հղում 1.** ՀՀ առողջապահության նախարարի 2006 թ. թիվ 534 հրամանով հաստատված «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր

**Հղում 2.** ՀՀ առողջապահության նախարարի 25.12.02 թ. N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմեր և կանոններ,

**Հղում 3.** ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշում

**Հղում 4.** ՀՀ առողջապահության նախարարի 16.04.09 թ. N 06-Ն «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր

**նշում 1**
Սպորտային լողավազաններ՝ 8-10 մ$^2$ , այլ տեսակի լողավազաններ՝ մեծահասակների համար՝ 5,0-8,0 մ$^2$ , երեխաների համար՝ 4,0-5,0մ$^2$,

**նշում 2**
Նախասրահ՝ մինչև 40 պարապողի դեպքում 1 պարապողին 0.5 մ$^2$, բայց ոչ պակաս, քան 10 մ$^2$
40-ից ավելի պարապողի դեպքում՝ 1 պարապողին 0.5 մ$^2$, բայց ոչ պակաս, քան 20 մ$^2$
Վերնահագուստի հանդերձարան (պարապողների և հանդիսատեսի)՝ 1 պարապողին 0.1մ$^2$, բայց ոչ պակաս, քան 10 մ$^2$
Զգեստարան մեծերի՝ 1 պարապողին 2.1-2.5 մ$^2$
Զգեստարան երեխաների՝ 1 պարապողին 2.9 մ$^2$

**նշում 3** տղամարդկանց՝ 1 զուգարանակոնք և 1 պիսուար 45 հոգու համար կանանց՝ 1 զուգարանակոնք 1 հերթափոխում 30 հոգու համար

**նշում 4** այդ թվում՝ քլորակրի պարզեցված լուծույթ (0,2-0,3%), քլորամին (0,5%), նիրտան (3,0%), տեխնիկական A և B մակնիշի նատրիումի հիպոքլորիդ (0,1-0,2%), քլորդեզին (5,0%), քլորդեզինի (0,5%) և սուլֆոքլորանտինի (0,2%) համակցությունը:

**նշում 5** այդ թվում՝ գազային քլոր, քլորակիր, կալցիումի հիպոքլորիդի երկհիմնային աղ, դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղ, տեխնիկական A մակնիշի նատրիումի հիպոքլորիդ, լիթիումի հիպոքլորիդ, դիքլորանտին, դիբրոմանտին, ակվատաբս:

**նշում 6** **ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

| *Սենքի նշանակություն* | *Ջրի ջերմ-աստիճան $^0C$* | *Օդի ջերմ-աստիճան $^0C$* | *Հարաբերական խոնավություն %* | *1 ժամում օդափոխանակության չափանիշներ* | | *Օդի շարժման արագություն մ/վրկ* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներհոս | արտաձիգ | |
| Մեծերի ավազան | 24-26 | - | - | - | - | - |
| Երեխաների ավազան | 30 | - | - | - | - | - |
| Լողավազանի ավազանի դահլիճներ | - | ջրի ջերմ-աստիճանից | ոչ ավելի 60% | 1 պարապողին ոչ պակաս 80մ$^3$/ժամ և | | ոչ ավելի 0.5 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1-2⁰ բարձր | | 1 հանդիսատեսին ոչ պակաս 20մ³/ժամ | | |
| Պարապմունքների նախապատրաստական դահլիճներ | - | 18 | չի նորմավորվում | 1 պարապողին ոչ պակաս 80մ³/ժամ | | ոչ ավելի 0.2 |
| Զգեստարաններ | - | 25 | չի նորմավորվում | 1 ժամում օդափոխանակության բազմապատիկություն | | չի նորմավորվում |
| | | | | հաշվեկշռով հաշ-ված ցնցուղներ | 2 (լողարաններից) | |
| Ցնցուղարաններ | - | 25 | չի նորմավորվում | 5 | 10 | չի նորմավորվում |
| Մերսման սենքեր | - | 22 | չի նորմավորվում | 4 | 5 | չի նորմավորվում |
| Սաունայի խցիկ | - | ոչ ավելի 120 | չի նորմավորվում | - | 5 (պարբերական գործունեության մարդկանց բացակայության պայմաններում) | չի նորմավորվում |
| Ջրի հետազոտության լաբորատորիա | - | 18 | չի նորմավորվում | 2 | 3 | չի նորմավորվում |

**նշում 7** ՀՀ ՇՆ II-8.03-96 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմեր, փոփոխություններ և լրացումներ, 21.12.04թ.ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 156-Ն հրաման, Աղյուսակ Թ1, 38 կետ

| Սենքեր | լուսավոր-վածության նորմավորման հարթության (Հ–հորիզոնական Ու – ուղղաձիգ) և ԲԼԳ, հարթության բարձությունը հատակից, մ | Տեսողական աշխատանքի կարգը և ենթակարգը | Բնական լուսավորում | Համատեղված լուսավորում | | | Արհեստական լուսավորում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԲԼԳ պն, % | ԲԼԳ պն, % | | | | | |
| | | | վերին կամ համակց-ված լուսավոր-ման դեպքում | կողա-յին լուսա-վորման դեպ-քում | վերին կամ համակց -ված լուսավո ր-ման դեպքում | կողային լուսավո ր-ման դեպք-ում | աշխատանքա յին մակերեսի լուսավորվածո ւթյունը լք, ընդհանուր լուսավոր-ման դեպքում | անհար-մարավետու թյան ցուցանիշը, ոչ ավել | լուսավորվ ածության բաբախմ ան գործա-կիցը, % ոչ ավել |
| Լողավազանի դահլիճ | Հ-ջրի մակերևույթ | Գ-1 | 2,0 | 0,5 | 1,2 | 0,3 | 150 | 60 | 20 |
| Ծածկած լողավազաններ | Հ-ջրի մակերևույթ | Գ-1 | 2,0 | 0,5 | 1.5 | 0.4 | 150 | 60 | 20 |

**նշում 8** Բաց տիպի լողավազանի ավազանի ջրի ջերմաստիճանն ամռանը պահպանվում է 27$^0$C, ձմռանը՝ 28$^0$C, իսկ լողալ սովորողների համար՝ 29$^0$C:

փակ տիպի, մեծերի լողավազանի ավազանում ջրի ջերմաստիճանն պահպանվում է 24-26$^0$C,
փակ տիպի, փոքրերի լողավազանի ավազանում ջրի ջերմաստիճանն պահպանվում է 30$^0$C:

**նշում 9** **ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ**

| **Ցուցանիշներ** | **Չափման միավորներ** | **Նորմաներ** |
|---|---|---|
| Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/ | 100 մլ-ում մանրէների քանակ | Բացակայություն |
| Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ | 100 մլ-ում մանրէների քանակ | Բացակայություն |
| Մանրէների ընդհանուր քանակություն | Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում | 50-ից ոչ ավել |
| կոլիֆագեր 3/ | Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում | Բացակայություն |
| Սուլֆիտվերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/ | Սպորների քանակը 20 մլ-ում | Բացակայություն |
| Լյամբլյաների ցիստեր 3/ | Ցիստերի քանակը 50 մլ-ում | Բացակայություն |

1/ Որոշման ժամանակ կատարվում է վերցված 100 մլ ջրի նմուշի եռանվագ հետազոտություն:
3/ Հետազոտությունները կատարվում են միայն մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:
4/ Հետազոտությունը կատարվում է ջրի մշակման տեխնոլոգիական եղանակի արդյունավետության գնահատման ժամանակ:

**ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ**

| **Ցուցանիշներ** | **Չափման միավորներ** | **Նորմեր, ոչ ավելի** |
|---|---|---|
| Հոտ | բալեր | 2 |
| Համ | -//- | 2 |
| Գունավորում | աստիճաններ | 20 /35/ 1) |
| Պղտորություն | ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կաոլինի) | 2.6 /35/ 1)<br>1.5 /2/ 1) |

**նշում 10** **ԱՎԱԶԱՆԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ**

| *Ցուցանիշներ* | *Նորմեր* |
|---|---|
| Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ | |
| Պղտորություն, մգ/լ, ոչ ավելի | 2 |
| Գունավորում, աստիճաններով, ոչ ավելի | 20 |
| Հոտ, բալերով, ոչ ավելի | 3 |
| Ամոնիակային ազոտ | 0,05 մգ/լ ոչ ավելի |
| Քլորիդներ | ոչ ավելի, քան 550 մգ/լ |
| Մնացորդային քլոր - ազատ | 0.5-0,7 մգ/լ |
| Մնացորդային բրոմ | 0.8-1.5 մգ/լ |
| Մնացորդային օզոն | ոչ պակաս 0.1 մգ/լ |

| | |
|---|---|
| Ֆորմալդեհիդ՝ օզոնացման դեպքում | ոչ ավելի, քան 0,05 մգ/լ |
| Քլորոֆորմ՝ քլորացման դեպքում | ոչ ավելի, քան 0,1 մգ/լ |

Եթե ընդհանուր մնացորդային քլորի խտությունը 0.8-1.2 մգ/լ է, ապա թույլատրվում է, որ ազատ մնացորդային քլորի կոնցենտրացիան լինի 0.3 մգ/լ-ից պակաս:

1-6 տարեկան երեխաների համար նախատեսված լողավազանում ազատ մնացորդային քլորի կոնցենտրացիան թույլատրվում է 0.1-0.3 մգ/լ, 100 մլ ջրում կոլիֆագեր չհայտնաբերելու պայմանով:

Ջուրը քլորով (գիշերը) և օզոնով (ցերեկը) հաջորդական ախտահանման ժամանակ, քլորի մնացորդային կոնցենտրացիան պետք է լինի ոչ պակաս 0.4 մգ/լ, իսկ օզոնինը՝ ոչ պակաս, քան 0.1 մգ/լ:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման և քլորացման միաժամանակյա օգտագործման դեպքում ընդհանուր մնացորդային քլորի կոնցենտրացիան կարող է իջեցվել մինչև 0.3 մգ/լ:

Ջրի ախտահանումը կերակրի աղը էլեկտրոլիզի ենթարկելու միջոցով, ստացված նատրիում հիպոքլորիդով իրականացնելու դեպքում, թույլատրվում է քլորիդների կոնցենտրացիայի ավելացում մինչև 700 մգ/լ:

| *Ցուցանիշներ* | *Նորմեր* |
|---|---|
| Հիմնական մանրէաբանական և մակաբուծաբանական ցուցանիշներ | |
| Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ 100 մլ-ում | 1 |
| Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ 100 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |
| Կոլիֆագեր 100 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |
| Ոսկեգույն ստաֆիլակոկեր 100 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |
| Ախտածին միաբջիջների ցիստեր 50 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |
| Հելմինթների ձվեր և թրթուրներ 50 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |
| Մանրէաբանական լրացուցիչ ցուցանիշներ | |
| Վարակիչ հիվանդությունների հարուցիչներ 1000 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |
| Կապտաթարախածին ցուպիկներ 50 մլ-ում | չպետք է հայտնաբերվեն |

Ավազան ջուր մատակարարող համակարգով ջրի հավասարաչափ բաշխումը պարզելու նպատակով նմուշառումը կատարվում է ավազանի ոչ պակաս, քան 2 կետում, ջրավազանի ծանծաղ և խոր մասերում ջրի հայելու մակերեսից 25-30 սմ խորության վրա:

**նշում 11** Որպես ջրի վարակազերծման հիմնական մեթոդներ օգտագործվում են քլորացումը, բրոմացումը, օզոնացումը, ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթումը 16 մՋ/սմ$^2$-ից ոչ պակաս չափաքանակից, անկախ սարքավորման տեսակից:

**նշում 12** Զուգարանները երկնվագ սրբում են, այնուհետև՝ ողողում ջրով՝, որի համար օգտագործվում է 1%-ոց քլորամին Բ, լվացող-ախտահանող միջոցներ՝ 5 գ. 100սմ$^2$ մակերեսի հաշվարկով, 0.5-%-անոց լվացող նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ, կալցիումի հիպոքլորիդի (0.5%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթներ: Ամենօրյա սանիտարական մաքրումը և ախտահանումը կատարվում է առնվազն 2 անգամ և ըստ անհրաժեշտության՝ եթե սենքերի պատերին, հատակին և սարքավորումների մակերեսներին կան տեսանելի աղտոտվածության հետքեր կամ հատակի մակերեսին կան ջրակուտակումներ կամ խոնավություն: Սանիտարական մաքրումը կատարվում է խոնավ եղանակով: Սանիտարական մաքրումը և ախտահանումը ընդգրկում է սենքերի պատերի, հատակի, դռների բռնակների և սարքավորումների մաքրումը և ախտահանումը: Սենքերի հիմնական մաքրումը կատարվում է շաբաթը մեկ անգամ՝ ախտահանիչ նյութերի օգտագործմամբ (6%-անոց ջրածնի գերօքսիդի և 0.5%-անոց լվացող նյութի խառնուրդով): Հիմնական մաքրումը ընդգրկում է սենքերի պատերը, հատակը, առաստաղը, պատուհանները, դռները, աղբարկղները և սարքավորումները:
Զուգարանների մաքրման պարագաները ախտահանում են աշխատանքային օրվա վերջում՝ նատրիումի հիպոքլորիդի (0.5%), քլորամին Բ-ի (1%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթների մեջ 1 ժամ ընկղմելով, որից հետո՝ պարզաջրելով:

**նշում 13** Օգտագործում են քլորակիր (պարզեցված լուծույթ 1%), քլորդեզին (5%), նիրտան (3,0%) կամ ՀՀ սահմանված կարգով գրանցված և թույլատրված այլ միջոցներ: Ավազանի ջուրը դատարկելուց և մեխանիկական մաքրումից հետո ավազանի ախտահանումը կատարվում է 100 մգ/լ կոնցենտրացիայով ակտիվ քլոր պարունակող լուծույթով կրկնակի ոռոգման միջոցով, 0,6-0,8 լ/մ$^2$ քանակությամբ քլոր պարունակող ախտահանիչ լուծույթի հաշվարկով: Ախտահանիչ լուծույթի ողողումը և հեռացումը կատարվում է տաք ջրով՝ մշակումից 1 ժամ հետո: Ավազանի ջրում կապտաթարախային ցուպիկի հայտնաբերման դեպքում ավազանը մշակվում է 10%-անոց բորաթթվի լուծույթով՝ 2 ժամ տևողությամբ:

**նշում 14** Թերապևտի / ընտանեկան բժշկի զննում/՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ
Մաշկավեներաբանի զննում՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ
Հետազոտություններ պալարախտի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 1 անգամ
Արյան հետազոտություն՝ սիֆիլիսի, քսուք (քերուկ) սուսանակի, տրիխոմոնազի, քլամիդիոզի, ուրեոպլազմոզի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 1 անգամ
Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ
Հետազոտություններ հելմիթակրության նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ:

**նշում 15** Ներքոհիշյալ ցուցանիշների որոշմամբ, նմուշառման հետևյալ հաճախականությամբ.
-հիմնական մանրէաբանական ցուցանիշներ (կոլիֆորմ մանրէներ, ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ, կոլիֆագեր և ոսկեգույն ստաֆիլակոկեր), ամոնիակի ազոտ, քլորիդներ և ջրի որակի բարելավման նպատակով օգտագործվող ռեագենտների մնացորդային քանակներ՝ 10 օրը 1 անգամ,
-մակաբուծաբանական ցուցանիշներ (հելմինթների ձվեր և թրթուրներ)՝ ամիսը 1 անգամ,
-զգայորոշման ցուցանիշներ (պղտորություն, գունավորում, հոտ), օրը 1 անգամ,
-վարակազերծող ռեագենտների (քլոր, բրոմ, օզոն) մնացորդային քանակություններ, 4 ժամը 1 անգամ:

**նշում 16** Կոլիֆորմ մանրէների, ախտածին միաբջիջների ցիստերի, հելմինթների ձվերի և թրթուրների հայտնաբերման նպատակով) մանրէաբանական և մակաբուծաբանական հետազոտությունների համար լվացուկները վերցվում են լողավազանի, բաղնիքի ավազանի բազրիքի, զգեստարանների նստարանների, ցնցուղարանի հատակի, պատերի, զգեստարանի, սանհանգույցի և ցնցուղարանի դռների բռնակների և այլ ախտահանվող մակերեսներից՝ ամիսը 1 անգամ հաճախականությամբ:

Տեսուչի ստորագրությունը_____ Տնտեսվարողի ստորագրությունը_____